## ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N 25/02-Թ

12. 02 .2025թ

ք.Արտաշատ

ՀՀ Արարատի մարզպետի աշխատակազմը, ի դեմս գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա /այսուհետև Նվիրատու/ մի կողմից և ՀՀ Արարատի մարզի Պարույր Սևակի տուն-թանգարան ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն Սևակ Ղազարյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա /այսուհետև Նվիրառու/ մյուս կողմից, հիմք ընդունելով «2024թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքը կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Սույն պայմանագրով պատվիրատուն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով վերապահված լիազորությունները պատշաճ կատարելու նպատակով, կատարողին տրամադրում է 10056,3 հազ. դրամ «2025 թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի բյուջետային ծախսերի (ըստ դասիչների) 1075 ծրագրի «Մշակութային ժառանգության ծրագիր» 11004 «Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ» հատկացումներն օգտագործել «Պարույր Սևակի անվան տուն թանգարան» ՊՈԱԿ-ի 2025թ. հաստատված ծախսերի նախահաշվին համապատասխան:

2. Նվիրատուն վճարումները իրականացնում է ՀՀ պետական բյուջեով հաստատված եռամսյակային համամասնությունների շրջանակներում:

### 2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

2.1 Սույն պայմանագրով սահմանված պայմանների չկատարման դեպքում կողմերը պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

### 3. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

3.1Պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն պայմանով, եթե դրանք կատարված են գրավոր համաձայնագիր կնքելու միջոցով:

3.2 Սույն պայմանագիրը իրավաբանական ուժ է ստանում կնքման պահից և գործում է մինչև 2025 թվականի դեկտեմբերի 30-ը:

3.3 Սույն պայմանագիրը կազմված է մեկ էջից, գրված է հայերեն լեզվով` երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

### 4. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՆՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ Արարատի մարզպետի աշխատակազմ
ք. Արտաշատ, Օգոստոսի 23/60
Ֆին. նախ. Գործառ. Վարչ.
900411068027
ՀՎՀՀ 04245019
Գլխավոր քարտուղար`

_______________ Ա. Մկրտչյան
ստորագրություն

Կ.Տ.

**ՆՎԻՐԱՌՈՒ**

Պարույր Սևակի տուն-թանգարան
ՀՀ ֆինանսների նախարարության գ/վ
Հ/Հ 900428000278
ՀՎՀՀ 04105615
Տնօրեն`

_______________ Ս. Ղազարյան
ստորագրություն

Կ.Տ.